**Պատմություն** - 2017

**ՀԱՐՑԱՏՈՄՍ** 1

9-**րդ դասարան**

Ι. **ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ** (17 **միավոր**)

1) <<**ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**>> (12 **միավոր**)

***ա. Նշել ճիշտ պատասխանը***: *(0,5 X 8 = 4 **միավոր**)*

1. **Վանի թագավորության ո՞ր արքայի օրոք կառուցվեց «Շամիրամի ջրանցքը»՝**

ա) Սարդուրի Ι բ) Մենուա գ) Ռուսա Ι դ) Սարդուրի ΙΙ

2. **Արտաշես** Ι**-ից հետո Մեծ Հայքում իշխեց նրա ավագ որդին՝**

ա) Արտավազդ Ι-ը բ) Տիգրան Ι-ը գ) Տիգրան ΙΙ-ը դ) Արտավազդ ΙΙ-ը

3. **Ո՞ր զորավարն էր Խառանի ճակատամարտում պարտված հռոմեական զորքի հրամանատարը**:

ա) Լուկուլլոս բ) Պոմպեոս գ) Կրասոս դ) Անտոնիոս

4. **Հայոց ո՞ր զորավարն է մահապատժի ենթարկում Մերուժան Արծրունուն՝ «պսակելով» նրան շիկացած շամփուրով**:

ա) Մուշեղ Մամիկոնյանը բ) Սմբատ Բագրատունին

գ) Վասակ Մամիկոնյանը դ) Մանվել Մամիկոնյանը

5. **Նվարսակի հայ-պարսկական պայմանագիրը կնքվեց՝**

ա) 481 թ. բ) 484 թ. գ) 485 թ. դ) 488 թ.

**6. Ռուբինյան ո՞ր իշխանի օրոք Սիսը դարձավ Կիլիկիայի հայկական պետության մայրաքաղաք**:

ա) Ռուբեն Ι բ) Թորոս Ι գ) Լևոն Ι դ) Մլեհ

7. **Ո՞վ է** <<**Արշակ Երկրորդ**>> **օպերայի հեղինակը**:

ա) Արմեն Տիգրանյան գ) Քրիստափոր Կարա-Մուրզա

բ) Մակար Եկմալյան դ) Տիգրան Չուխաջյան

8. **Հայրենական մեծ պատերազմին մասնակից հայկական զորամիավորումներից առաջինը ռազմաճակատ մեկնեց՝**

ա) 89-րդ դիվիզիան գ) 408-րդ դիվիզիան

բ) 390-րդ դիվիզիան դ) 409-րդ դիվիզիան

***բ. Լրացնել կամ գրել պատասխանները:*** *(1 X 4 = 4 **միավոր**)*

1. **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ**: (1 **միավոր**)

ա) Վահան Մամիկոնյանի ճանաչվելը Հայոց սպարապետ և տանուտեր
բ) Ակոռիի ճակատամարտը
գ) Ճարմանայի ճակատամարտը
դ) Ներսեհապատի ճակատամարտը
ե) Նվարսակի պայմանագրի կնքումը

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | | | |

2. **Մշակութային իրադարձությունները դասավորել ըստ դրանց ժամանակագրական հաջորդականության**: (1 **միավոր**)

ա) Ներսիսյան դպրոցի հիմնումը
բ) Ա. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» պիեսի առաջին բեմադրությունը Երևանում
գ) Շուշիի թեմական դպրոցի բացումը
դ) Երևանի թեմական դպրոցի բացումը
ե) Աստվածաշնչի ամբողջական տպագրությունը Ամստերդամում Ոսկան Երևանցու ջանքերով

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | | | |

3. **Արտաշեսյան արքաների գահակալման տարիները համապատասխանեցնել նրանց անուններին**: (1 **միավոր**)

1. Տիգրան I
2. Արտավազդ I
3. Արտաշես II
4. Արտավազդ III
5. Տիգրան III

ա) Ք. ա. 160 - 115 թթ.
բ) Ք. ա. 20 - 8 թթ.
գ) Ք. ա. 189 - 160 թթ.
դ) Ք. ա. 115 - 95 թթ.
ե) Ք. ա. 5 - 2 թթ..
զ) Ք. ա. 30 - 20 թթ.

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | | | |

4. **Բագրատունյաց արքաների գահակալման տարիները համապատասխանեցնել նրանց անուններին**: (1 **միավոր**)

1. Գագիկ I
2. Սմբատ II
3. Սմբատ I
4. Աշոտ III
5. Աշոտ II

ա) 953-977 թթ.
բ) 890-914 թթ.
գ) 990-1020 թթ.
դ) 977-990 թթ.
ե) 928-953 թթ.
զ) 914-928 թթ.

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | | | |

**գ**. **Լրացնել պատասխանները**: *(1 X 4 = 4 **միավոր**)*

1. **Համապատասխանեցնել գիտության**, **մշակույթի բնագավառները և դրանք ներկայացնող գործիչների անունները**: (1 **միավոր**)

1. Հակոբ Չամչյան
2. Նիկողայոս Ադոնց
3. Պետրոս Ադամյան
4. Մարգար Առուստամյան
5. Անդրեաս Տեր-Մարուքյան

ա) պատմագիտություն
բ) աստղագիտություն
գ) բժշկություն
դ) քիմիա
ե) կերպարվեստ
զ) թատրոն

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | | | |

2. **Համապատասխանեցնել պարբերականների և դրանց հիմնադիր գործիչների անունները**: (1 **միավոր**)

1. <<Մշակ>>
2. <<Հյուսիսափայլ>>
3. <<Գեղարվեստ>>
4. <<Անահիտ>>

ա) Գարեգին Լևոնյան
բ) Գրիգոր Արծրունի
գ) Արշակ Չոպանյան
դ) Հարություն Սվաճյան
ե) Ստեփանոս Նազարյան

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | | |

3. **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ**: **Ընտրել երկու պատասխան**:
(0,5 X 2 = 1 **միավոր**)

ա) 1918 թ. հունիսի 4-ին Բաթումում ստորագրվեց հայ-թուրքական հաշտության պայմանագիր, որն իր ուժը պահպանեց մինչև 1920 թ. դեկտեմբերի 2-ը:
բ) Հաշտության պայմանագրով Հայաստանն ունենալու էր սահմանափակ թվով զորք, երկաթուղիների վերահսկողությունն անցնելու էր Թուրքիային:
գ) Հայոց ազգային խորհուրդը Հայաստանի առաջին կառավարության նախագահ (վարչապետ) ընտրեց Ալեքսանդր Խատիսյանին:
դ) 1919 թ. հունիսին անցկացված ընտրությունների միջոցով ձևավորվեց Հայաստանի Հանրապետության խորհրդարանը, որի պատգամավորների ճնշող մեծամասնությունը <<Հայ հեղափոխական դաշնակցություն>> (ՀՅԴ) կուսակցության անդամներ էին:
ե) Հայաստանի մշակութային կյանքում կարևոր իրադարձություն էր պետական համալսարանի հիմնումը, որի մասին կառավարությունը որոշում ընդունեց 1920 թ. հունվարին:

| | |
|---|---|
| | |

4. **Տրված պնդումներից որո՞նք են սխալ**: **Ընտրել երկու պատասխան**:
(0,5 X 2 = 1 **միավոր**)

ա) Հայ – ռուսական հարաբերությունները կարգավորելու նպատակով 1920 թ. մայիսին Մոսկվա գործուղվեց Հայաստանի պատվիրակությունը՝ գրող Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ:
բ) 1920 թ. հունվարին թուրքական խորհրդարանն ընդունեց <<Ազգային ուխտ>> անվամբ մի փաստաթուղթ, որով <<բուն թուրքական տարածք>> էին հռչակվում ոչ միայն արևմտահայ բոլոր նահանգները, այլև արևելահայ՝ Կարսի և Արդահանի շրջանները:
գ) 1920 թ. օգոստոսի 24-ին ստորագրված ռուս-թուրքական նախնական պայմանագրով Ռուսաստանը ոչ միայն ճանաչում էր թուրքական <<Ազգային ուխտը>>, այլև պարտավորվում էր քեմալականներին օգնել դրամով (ոսկով), զենքով և զինամթերքով:
դ) 1920 թ. սեպտեմբերի 23-ին քեմալական Թուրքիան առանց պատերազմ հայտարարելու հարձակվեց Հայաստանի Հանրապետության վրա, սեպտեմբերի վերջին թուրքերը գրավեցին Սարիղամիշն ու Կաղզվանը, իսկ հոկտեմբերի 30-ին՝ Կարսը:
ե) 1920 թ. նոյեմբերի 25-ին Ալեքսանդրապոլում (Գյումրի), Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանի մասնակցությամբ, սկսվեցին թուրք-հայկական հաշտության բանակցությունները:
զ) 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանում ստորագրված հայ-ռուսական համաձայնագրով Հայաստանը հայտարարվեց Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն:

| | |
|---|---|
| | |

2) <<**ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**>> (5 **միավոր**)

***ա. Նշել ճիշտ պատասխանը***: *(0,5 X 4 = 2 **միավոր**)*

1. **Եգիպտական ո՞ր փարավոնի օրոք մայրաքաղաք հռչակվեց Մեմֆիսը**:
ա) Թութմոս III գ) Մինա
բ) Ռամզես II դ) Ռամզես I

2. **Ո՞ր քաղաքն էր Ատտիկա մարզի կենտրոնը**:
ա) Միլեթ գ) Հալիկառնաս
բ) Աթենք դ) Սպարտա

3. **Ե՞րբ է ընդունվել «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը»**:
ա) 1791 թ. գ) 1794 թ.
բ) 1792 թ. դ) 1789 թ.

4. **Ե՞րբ է հիմնադրվել Հյուսիս-ատլանտյան դաշինքը** (**ՆԱՏՕ**):
ա) 1945 թ. գ) 1952 թ.
բ) 1949 թ. դ) 1955 թ.

***բ***. *(1 X 3= 3 **միավոր**)*

1. **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ**:
(1 **միավոր**)

ա) «Քաղաքացիական իրավունքի հավաքածու»-ի կազմումը Բյուզանդիայում
բ) Կոստանդնուպոլսի համալսարանի բացումը
գ) Վերդենյան դաշնագրի ստորագրումը
դ) Ժակերիա անվամբ գյուղացիական ապստամբության սկիզբը Ֆրանսիայում
ե) Արաբական խալիֆայության կործանումը

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | | | |

2. **Համապատասխանեցնել պատմական իրադարձություններն ու դրանց տարեթվերը**: (1 **միավոր**)

1. Երկրորդ հանրապետությունը Ֆրանսիայում
2. Ֆրանս-պրուսական պատերազմը
3. Ֆրանսիական հեղափոխության հանրապետական շրջափուլը
4. Վիեննայի վեհաժողովը
5. Քաղաքացիական պատերազմն Անգլիայում

ա) 1792-1799 թթ.
բ) 1814-1815թթ.
գ) 1642-1649թթ.
դ) 1848-1852 թթ.
ե) 1852-1870 թթ.
զ) 1870-1871 թթ.

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | | | |

3. **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ**: **Ընտրել երկու պատասխան**:
(0,5 X 2 = 1 **միավոր**)

ա) ԱՄՆ–ի նախաձեռնությամբ 1949 թ. ստեղծվեց Միավորված ազգերի կազմակերպությունը:
բ) ՄԱԿ-ի 1947 թ. որոշմամբ Պաղեստինում ստեղծվեց Իսրայել հրեական պետությունը:
գ) 1964 թ. ԽՍՀՄ-ի պահպանողական ուժերը Նիկիտա Խրուշչովին հեռացրեցին իշխանությունից:
դ) 1945 թ. փետրվարին Ղրիմի Յալթա քաղաքում տեղի ունեցավ դաշնակից երկրների ղեկավարների՝ Ու. Չերչիլի, Ի. Ստալինի և Հ. Տրումենի հանդիպումը:
ե) 1955 թ. Խորհրդային Միության նախաձեռնությամբ հիմնվեց Վարշավյան դաշինքը:

| | |
|---|---|
| | |

II. ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱԶԱՏ ՇԱՐԱԴՐԱՆՔՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ (3 **միավոր**)

1. **ՀԽՍՀ Սահմանադրությունը: Անդրկովկասյան Դաշնության (Ֆեդերացիայի) և ԽՍՀՄ-ի կազմավորումը.**
   **ա. ՀԽՍՀ առաջին Սահմանադրության ընդունումը**
   **բ. Անդրկովկասի Խորհրդային Դաշնային Հանրապետության կազմավորումը**
   **գ. Խորհրդային Միության կազմավորումը:**

**Է. Մինասյան**

**Պատմության հանձնաժողովի նախագահ,**
**պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր**

17.04.2017 թ.